https://doi.org/10.46991/hc.2022.18.2.196

**Vahram Vardanyan, Spiritual Screams in Silence, Yerevan, Publishing House "Asoghik", 2020, 152 pages**

**Edik Minasyan**
*https://orcid.org/0000-0003-3206-6103*
*Professor at YSU Chair of Armenian History, Doctor of History, Dean of the Faculty of History*
*eminasyan@ysu.am*

**Rubik Tovmasyan**
*https://orcid.org/0000-0001-9458-9888*
*Associate Professor at the Chair of Agrarian Economics of the National Agrarian University of Armenia, Candidate of Economics*
tovmasyan.rubik@inbox.ru

**Keywords:** Vahram Vardanyan, Spiritual Screams in Silence, Armenian Genocide, Verin Marnik, Taron region, Kakavadzor village of Talin region, memoir, history of the Big Family.

*The review refers to Vahram Vardanyan's work "Spiritual Screams in Silence". This is the story of a family, representatives of which lived in several villages of the Taron region. During the Genocide, the 59 members of this family appeared in exile, as a result of which it settled in Kakavadzor village of Talin region. The work presents the documentary material, which is at the disposal of Vahram Vardanyan and the memoirs that the author heard from the surviving members of this family.*

**Վահրամ Վարդանյան, Ոգեղեն ճիչեր լռության մեջ, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2020, 152 էջ:**

**Էդիկ Մինասյան**
*Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր*

**Ռուբիկ Թովմասյան**
*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրարային Էկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.*

**Հիմնաբառեր՝** Վարիրամ Վարդանյան, Ոգեղեն ճիչեր լռության մեջ, Մեծ եղեռն, Վերին Մառնիկ,



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2022

Տարոն աշխարհ, Թալինի շրջանի Կաքավաձոր գյուղ, հուշագրություն, գերդաստանի պատմություն։

*Գրախոսությունը վերաբերում է Վահրամ Վարդանյանի հեղինակած «Ոգեղեն ճիչեր լռության մեջ» աշխատությանը։ Սա մի գերդաստանի պատմություն է, որն ապրել է Տարոն աշխարհի մի քանի գյուղերում։ Ցեղասպանության ընթացքում 59 անդամից բաղկացած գերդաստանը ստիպված տարագրվել է, ինչի արդյունքում հաստատվել է Թալինի շրջանի Կաքավաձոր գյուղում։ Աշխատանքում ներկայացված է Վահրամ Վարդանյանի ձեռքի տակ եղած փաստագրական նյութն ու այն հուշերը, որ լսել է հեղինակը գերդաստանի ողջ մնացած անդամներից։*

**Ваграм Варданян, Духовные крики в тишине, Ереван,**
**Издательство «Асогик», 2020, 152 стр.**

**Эдик Минасян**
*доктор исторических наук, профессор, декан факультета истории ЕГУ*

**Рубик Товмасян**
*Доцент кафедры аграрной экономики Национального аграрного университета Армении, кандидат экономических наук*

**Ключевые слова:** Ваграм Варданян, Духовные крики в тишине, Геноцид армян, Верин Марник, Таронский регион, село Какавадзор Талинского района, мемуары, история Большого рода.

*В рецензии говорится о произведении Ваграма Варданяна «Духовные крики в тишине». Это история одного рода, представители которого жили в нескольких деревнях Таронского региона. Во время Геноцида 59 членов этого роды были вынуждены покинуть свою историческую землю, в результате чего они поселились в селе Какавадзор Талинского района. В работе представлен документальный материал, находящийся в распоряжении Ваграма Варданяна, и воспоминания, которые автор слышал от оставшихся в живых членов этого рода.*

* * *

Իր արմատներին ամուր կառչած, էրգրի մարդու համն ու հոտը պահող ուշագրավ մտավորական Վահրամ Վարդանյանի հեղինակած գիրքը նվիրված է ավանդապաշտ մի հայ գերդաստանի անցած ուղուն, նրա պատմությանը։ Այն առանձնահատուկ հուշագրություն է Հայոց մեծ Եղեռնից մազապուրծ փրկված մի ընտանիքի, որը մինչև 1916 թվականի ապրիլ ամիսն ունեցել է 59 անդամ և իր բարի համբավով ճանաչվել է Տարոն աշխարհի ոչ միայն Վերին Մառնիկ գյուղում, այլ նաև շրջակա Բերդակ, Ալվառինջ, Սինամերկ, Հավատորիկ և այլ շատ ու շատ գյուղերում։ Այս տոհմիկ գերդաստանից ազգակործան եղեռնից փրկվել և Զորավար Անդրանիկի ղեկավարած զորքի հետ Արևելյան Հայաստան են հասել Վահրամ Վարդանյանի Միսակ պապը, Անգին տատը, Միսակ պապի միակ քույր Շուշանը և Միսակի ավագ եղբոր՝ Մաթոսի 9-ամյա

որդին՝ Թորգոմը, և Մարգար եղբոր 7-ամյա Վահանը։ Այո՛, նրանցից ընդամենը մեծ դեգերումներով, դժվարություններով ու չարչարանքներով հաստատվել են նոր բնակատեղում՝ Թալինի շրջանի Կաքավաձոր գյուղում։ Այդ գյուղում ապաստանած մարդիկ Սասուն-Մուշ աշխարհի գաղթյալ ժողովրդի զավակներն են՝ իրենց առաքինի, սովորույթներով, նիստուկացով, հայրենասիրական կորովով։

Նոր միջավայրում գաղթական հատվածը, հանգրվանելով հայրենի հողի մի կտորի վրա, Արագածի լեռնալանջերին նոր կացութաձևի պահանջներին համահունչ արարել է, իր աշխատասիրությամբ ու նվիրումով ստեղծել է նոր ապրուստի միջոցներ ու բարիքներ, ըստ ամենայնի՝ շենացրել է այն հողը, որի վրա տասնամյակներով ապրել է և հաջորդ սերունդներին թողել է հրաշալի ու օրինակելի աշխատանքային դիտարժան ու բարոյական ավանդույթներ։ Այս ամենը, անտարակույս, հայ ժողովրդի պատմության մի անբաժանելի մասն է, նրա գնահատելի, թանկարժեք բաղադրիչը, ինչը միաժամանակ նաև յուրահատուկ պատգամ է ներկա ու գալիք սերնդին, մտահոգիչ, փոթորկահույզ ու կայծակնային արագությամբ հարափոփոխ ժամանակներին դիմագրավելու արիաբար կռվան, քանզի ամեն մի ազգի հզորությունն ու ապագան խարսխված է յուրաքանչյուր հայ գերդաստանի ամրության, անբաժան միասնության վրա։

Այս միջավայրում է ծնվել և հասակ առել Վահրամ Վարդանյանը՝ ամբողջովին իմաստավորվելով նրանց աշխարհահայեցողությամբ ու կենսափիլիսոփայությամբ, լսել է նրանց տանջագին մտորումները, կիսել հոգեկան տառապանքները, էրգրի կորստի պատճառած վիշտը միաժամանակ նրանցից, հատկապես Միսակ պապից, ընդօրինակել պարզություն, մաքրություն, բարություն, աշխատասիրություն, հայրենասիրություն և իր համար ամբարել աշխարհի իրադարձությունների մասին անհերքելի մի կենսափիլիսոփայություն, որ «հային միայն զենքով կա փրկություն»։ Սա անհերքելի ճշմարտություն է, ինչը Վ. Վարդանյանն իր հրատարակած սույն գրքում ձգտել է ներկայացնել հետաքրքրասեր ընթերցողին և պետք է փաստել, որ դա նրան ամբողջովին հաջողվել է։

Հեղինակի գրքի կարևորագույն արժանիքներից մեկը հենց Վարդանյանների հզորագույն գերդաստանի, ուսանելի օրինակով գերդաստանի գաղափարի ներկայացումն է՝ որպես ազգի, պետության գոյատևման ու զարգացման «մոդել» իր միասնությամբ, ընտանիքում յուրաքանչյուրն իր դերակատարությամբ նպաստում է հասարակության ընդհանուր ամրապնդմանը, որը գալիս է վաղնջական ժամանակներից և գնում է ապագա դարեր։ Իրավամբ, Վ. Վարդանյանը հայ ազգի հարատևումը շաղկապում է ավանդական հայ գերդաստանի հետ, ինչն էլ պայմանավորում է յուրաքանչյուր ազգի ինքնատիպությունը՝ որպես հայ ինքնության պահպանման ու հետագա վերելքի կարևորագույն նախապայման։

Կարդում ենք այդ հրաշք գիրքը, և մեր աչքերի դիմաց՝ Կաքավաձոր գյուղում, բացվում է մի սասունաշունչ աշխարհ՝ իր սրաձիգ լեռնագագաթներով, սառնորակ աղբյուրներով, լեռնաշխարհի քաջարի զավակներով, որոնք ամբողջ կյանքում մարտնչել են նամուսի, պատվի, արժանապատվության ու հայրենիքի լուսաշող ազատության գաղափարի մղումով։ Դա Տարոն աշխարհն է. աշխարհագրական պայմանների փոխվելն անգամ չի ազդում նրանց բարոյական նկարագրի ու կերպարի վրա, քանի որ նույն նահապետական բարքերի անաղարտ մաքրությունն ու ըմբոստ, ազատասեր ու խենթավուն ոգին են թևածում այդ աշխարհում։

Գրքի բազմաշնորհ հեղինակ Վահրամ Վարդանյանը, խորը կսկիծ ապրելով, ավելի քան 50 տարիներ ի վեր անընդմեջ մտորելով, առաջացած տարիքում՝ 2020 թ. սեպտեմբերին, վերջապես

սրտի հրամայական թելադրանքով թղթին է հանձնել իր ձեռքի տակ եղած փաստագրական նյութերը, իր երկու պապերի ու նրանց հասակակիցների արժանահավատ հոգեցունց պատմությունները և, վերջապես, Վահանի ու Թորգոմի սրտաճմլիկ հիշողությունները։ Այդ հուշերից ամեն մեկը նրա գերզգայուն հոգում հնչել են որպես լռության մեջ ոգեղեն ճիչեր, որոնք շատ հաճախ լսելի են եղել միայն այս գրքի հեղինակին, և մենք սխալված չենք լինի ասել, որ այդ ոգեղեն ճիչերը շատ դեպքերում խստապահանջ ընթերցողների վրա թողնում են ցնցող ազդեցություն մինչև հոգու խորքը և ստեղծում են յուրահատուկ կարոտի անկրկնելի աշխարհ (էջ 128-129, Կարոտի քարտեզ)։

Իրատես հայրենասեր Վահրամ Վարդանյանի գրիչը կախարդական ուժ ունի։ Յուրաքանչյուր պատմվածքի էության և վերլուծության հենց առաջին տողն ու նախադասությունը գրավում-հրապուրում են ընթերցողին նրա չթուլացնող հետաքրքրությամբ ու լարվածությամբ մինչև վերջ. «Ահա և աշխարհից հեռացավ մեր գերդաստանի մեծերից մեկը, ու նրա հոգին համբարձվել էր դեպի Էրգիր, դեպի իր Մառնկա սարեր և երկինք՝ այնտեղից գտնելու այդպես էլ չգծված … իր կարոտի քարտեզը»։

Գաղթական տարոնցին երկար ժամանակ, ուր էլ հաստատվելիս լիներ, նոր տուն չէր կառուցում, քանզի իրեն համարում էր ճամփորդ։ Երազում էր, որ մի օր կբացվի «էրգրի» ճամփան, ու ինքը կգնա իր ավեր տունը վերականգնելու։ Եվ քանի-քանիսը մեռան «էրգրի» կարոտը սրտերում։ Ճամփան փակ մնաց, իսկ կարոտն առավել սաստկացավ…։

Տարոն աշխարհի հոգեբանությունն ու բարքերը մարմնավորող կերպարների իսկական պատկերասրահ է ստեղծել Վահրամ Վարդանյանը։ Բայց կերպարներից ամենաբազմանիստն ու ուշագրավը հեղինակի հայրական Միսակ պապն է (որի գրկում Վահրամ թոռն իրեն իրավամբ զգում է աշխարհի ամենաերջանիկն ու ամենաապահովը. ինչ խոսք, այդպես են իրենց պատկերացնում աշխարհում գրեթե բոլոր երեխաները), որը գյուղում ու շրջապատում հարգանք վայելող իմաստունն է՝ մարդու և մարդկայինի մասին իր ուրույն ըմբռնումներով ու չափանիշներով։

Անկեղծ ու խոհափիլիսոփայական լուրջ ու հուզիչ տպավորություն է թողնում մայրական պապի՝ Եղիկի (Էղիկ) փրկվելու պատմությունը (էջ 122)։ Պատկառելի և խորիմաստ կերպարներ էին Ափո Վահանը, Ափո Թորգոմը, քեռի Բողոն, Մարե Հակոբը, Մառնիկցի Ավոն, Գուսկեցի Զաքարը, Խութեցի Ռուբենը և գյուղի մյուս մեծերը։

Սրտի անսահման կսկիծով Վ. Վարդանյանը նշում է. «Ափո Վահանի օգնությամբ ես փորձեցի գծագրել նրա պատմածով Մառնիկ գյուղի տեղն ու դիրքը նկարագրող քարտեզ։ … – Ահան, լաո՛, էս Մառնիկ գյուղի թիկունքում անտառներն են, որտեղ շատ հաճախ թաքնվում էր Գևորգ Չաուշը իր ֆիդայի ընկերներով։ Ես շարունակում էի Ափո Վահանի պատմածի իմ ընկալումը փոխանցել թղթին, ու, ցավոք սրտի, թղթի չափերը մշտապես չէին բավարարում գծվելիք իմ քարտեզի չափերին։

Անկեղծորեն նեղվում էի և խոստանում Ափո Վահանին, որ կգտնեմ մեծ չափերի գծագրական թուղթ ու անպայման կգծեմ նրա … կարոտի քարտեզը»։

Բազմաշնորհ Վահրամ Վարդանյանը ափսոսանքով նշում է, որ «բնության կարգին ու պահանջին համապատասխան կամաց-կամաց հանգան մեր գյուղի մեծերը՝ իրենց հետ տանելով չպատմած շատ պատմություններ, ու գյուղի կենտրոնում՝ նրանց հավաքատեղիում, դատարկ մնացին նրանցից յուրաքանչյուրի համար շարքով դրված քարերը…»։

Սա իսկական պատմագրություն է, Տարոն աշխարհի փաստագրական պատմության մի մասնիկը, որը գրքի գիտական արժանիքներից մեկն է։

Առանձին դիպվածների նկարագրությունները իսկական գրական վարպետության, գիտական անհատականության ծննդի վկայություններ են, այլ կերպ ասած՝ կարոտի էրգրաշունչ գրականությանն ու պատմությանը իր արժանի ներդրումն ունենալու ծանրակշիռ փորձը։

Սիրո, հարգանքի և երախտագիտության սրտառուչ, շատ հուզիչ և տպավորիչ նկարագրություն է իր առաջին ուսուցչուհու մասին գրված հուշը (էջ 130), ինչն անկեղծ խոստովանություն է իր բազմաբովանդակ զարգացման գործում նրա ունեցած անփոխարինելի դերակատարության մասին առաջին հերթին որպես բարոյական մարդու շնորհակալական խոսք։

Գրքի ուշադիր ընթերցողը անկեղծ, բարի նախանձ կունենա մեծ հոգու տեր Վ. Վարդանյանի նկատմամբ և կաշխատի նրանից սովորել ինչպիսի նվիրումով պաշտել ծնողներին, 4 քույրերին, եղբորը՝ Նվեր-Արայիկին, նրանց զավակներին, բոլոր-բոլոր բարեկամ-հարազատներին, էլ չասենք ընտանիքին՝ իր երեք ազգանվեր ու հանրապետական ճանաչում ունեցող որդիներին։ Ուսանելի ու նվիրվածության եզակի օրինակ։

Սրտի կսկիծով է Վահրամ Վարդանյանն ապրում իր 56-ամյակը չբոլորած հոր մահը, ամեն մի հարմար առիթի դեպքում ընթերցողին խորը ցավով նկարագրում, որ իր կամքից անկախ՝ չի հասցրել իր որդիական պարտքը ամբողջովին կատարել հոր հանդեպ, բայց միաժամանակ գրքի խորաթափանց ընթերցողը լիարժեքորեն ընկալում է իր մոր հանդեպ ունեցած նվիրումի չափն ու խորությունը…, իսկ ազնվատոհմիկ, խրատատու, կենցաղի բոլոր նրբին գաղտնիքների հանրագիտակ, անսահման կամեցող Սաթենիկ մայրիկը ճշգրտորեն գտել էր իր սիրեցյալ որդի Վահրամի կյանքը բնութագրող մի բանաձև. «… Բալե՛ս, դու սաղ աշխրքին ու մարդկանց համար անձրևացող դարձար՝ բացի քո ջանից»։ Ինչ խոսք, դա ապացուցված է ապրած կյանքով։

Անհրաժեշտ է նշել հեղինակի ստեղծագործական մեկ այլ հաջողության՝ հայրենի գյուղի բնության՝ ձորերի, քարաժայռերի, ծաղիկների ու թփուտների, աղբյուրների, ճանապարհների ու արահետների նկատմամբ անսահման սիրո, այդ բնությանը ձուլվելու, դրանում տարրալուծվելու պատրաստակամության մասին, որտեղ ինքնամոռաց կերպով է եղել ոգեղեն ճիչեր լռության մեջ. «… Մի շնչով անցա չորս կմ ճանապարհ, հասա Սուրգրի մոտ, որտեղից երևում էր մեր սքանչելի գյուղի համայնապատկերը։ Նստեցի ճամփեզրի քարերից մեկի վրա, որի դիմաց մասրենին էր ու սպասում էի ինձանից հետ մնացած և այդ օրը գյուղ վերադարձող ուսանողների խմբին, նրանց թվում՝ Համեստ քրոջս։

Վ. Վարդանյանը ստեղծված առիթը բաց չի թողել՝ դիտելու երբեմնի հայոց ճարտարա-պետության փառք համարվող Անիի մայրաքաղաքը՝ մեր կողմի ձորամիջյան սահմանից, և դարձյալ ընկել է խռովահույզ մտքերի մեջ՝ ապրելով պատմական հաղորդակցություն անէացած ոգեղեն լռության մեջ. «Տե՛ր Աստված, այս ինչ հրաշք կրկնություն է. քունքերիս ներսում զգալի լսելով սրտիս խփոցները՝ իմ ականջներում լսում էի ժամանակների տարբերության շոշափելի շունչն ու լռությունը, տեսնում էի հեծյալների խմբի տեղաշարժը. մտքի թռիչքն ինձ տարավ պատմության խորքերը…։

Սթափվեցի՝ աննկատելիորեն կողքիս հայտնված սահմանապահի շնչառությունը լսելով, նայեցի նրան։

Նա, մեղմիկ ժպտալով, ձեռքի շարժումով հասկացրեց, որ գնալու ժամանակն է…

Լռությունն ինձ տարել-կապել էր ժամանակի շնչին, ու այդ մթնշաղի մեջ թևածում էին Անիի բնակիչների ոգիները՝ շուրջս ստեղծելով անէացած, բայց անիացած, խոսուն լռություն։

Ինձ մնում էր բարձրաձայն գոչել՝ Անի քո քանդողի տունը քանդվի…»:

Բավարարվենք՝ ասելով, որ Վ. Վարդանյանի մոտ բնությունը շնչավորվել է, ավելի ճիշտ՝ մարդկայնացվել…: Հիրավի, խոսքը, պատկերը, երևույթը ուժգնությամբ հագեցնելու կարողության մասին է, ինչը վկայում է նրա ստեղծագործական վարպետության ևս մեկ հիմնավոր ապացույցի մասին:

Վահրամ Վարդանյանի ծավալուն սիրտը նաև փխրուն է, ինչպես հատուկ է ազնիվ ու գերզգայուն մարդկանց, արտասվում է նաև անսահման ուրախությունից, այսպես. «Ինձ համար անսպասելիորեն ժամը 16:00-ին Օշականի եկեղեցու հոգևոր հովիվ, քահանա տեր Վիգենը զանգեց: Տեղեկացա Սրբազանի որոշման մասին, որ 2020 թ. ողջ տարվա համար Օշականի եկեղեցու խաչքավորության պատիվը տրված է Վարդանյան գերդաստանին՝ վաստակած մեծագույն հարգանքի ու նվիրումի համար: Իմ ավագ որդին՝ Եղիազար Վահրամի Վարդանյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ռեկտորը, եկեղեցու սպասավորի պճնազարդ բաց կապտավուն սքեմը հագին, Սրբազանի հրավերով ոտքը դրեց եկեղեցու Սուրբ խորանի հարթակին: Հուզմունքս չկարողացա զսպել. արցունքներս հոսում էին: Ինձ համար նվիրական այս պահը թող պատկերացնեն իմ գերդաստանի հետագա սերունդները… »:

Մեզ մնում է ավելացնել, որ դա ուրախ լաց է, և թող միշտ Վարդանյանների գերդաստանի անդամները իրենց ազգին ու հայրենիքին ծառայելու հաջողություններով բոլորիս պարգևեն նման լացեր…

Իր գերդաստանի պատմությունը Վ. Վարդանյանը արդարացիորեն համարում է կյանքի բոլոր ակնթարթներում հոգու լռության մեջ լսվող ոգեղեն ճիչ՝ ուղղված ամեն մեկին ու ապագային: Այն արժանապատիվ հայ գերդաստանի պատմություն է, հայկյան ճիչ՝ ուղղված բոլոր բելերին, որոնք հենց մեր ժողովրդի գոյատևման ու հարատևման հիմքերն են փորձում խարխլել, բայց ամեն անգամ բախվում են հայկյան գերդաստանի միահամուռ հակահարվածին:

Այս գիրքը հիշողության մի թանկարժեք հատոր է, որից էլ ամբողջանում է հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը:

Վահրամ Վարդանյանի այս գիրքը ձոն է մայր հայրենիքին, հայ յուրաքանչյուր գերդաստանին ու հայ մարդուն: Այն համախմբման և միասնության կոչ է, որն ուղղված է ընթերցողի սրտին ու զգացմունքներին: Այն թանկարժեք նվեր է ընթերցողին, որի համար թանկ է հայկական ավանդապաշտության, գերդաստանի մեծարման գաղափարը:

Եվ, այսպես, Վահրամ Վարդանյանը, գրքի ամեն մի տողով վերադառնալով իր գերդաստանի ակունքներին ու նրա անցած ուղուն, այն հասցեագրել է յուրաքանչյուր հայ գերդաստանի, որ ամուր կառչած է մայր հողից ու նրա անանց ավանդույթներից:

Վարդանյանների գերդաստանին ու նրանց ժառանգներին նվիրված այս գիրքը կարող է սեղանի գիրք դառնալ յուրաքանչյուր հայ գերդաստանի համար՝ մեկ անգամ ևս հիշեցնելով, որ մենք եղել ենք, կանք և դեռ կլինենք՝ հարատևելով դարերի հորձանուտներում, քանի դեռ կա այս երկիրը շենացնող ու նրա հարստությունները բազմապատկող ավանդապաշտ հայկական գերդաստանը: